Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար փաստաթղթերի պահման պահարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 ապրիլի 2022թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մկրտչյան, Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	Փաստաթղթերի պահման պահարաններ	-

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 07.04.2022թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 08.04.2022թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	Ջուզեպպե ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01034318, Հ.Հովհաննիսյան 24/7, Guiseppemalimenti@yandex.com , 055 75 54 55
2	Հ.Սմբատ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 04218395, Արարատի մարզ, գ.Բուրաստան, h.s2013@mail.ru , 093 43 37 13
3	ԱՁ Արտակ Իսրայելյան	ՀՎՀՀ՝ 21310817, ՀՀ, ք. Երևան, Նար Դոս 70, շենք 50, բն. 16, artak925@mail.ru , 091 55 37 43

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ քննչական կոմիտե ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/ հ	Մասնակիցների անվանումներ	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Ջուզեպպե ՍՊԸ	120000000	20 %	144000000	3960000	20 %	4752000.00	
1	Հ.Սմբատ ՍՊԸ	4000000	0 %	4000000	4000000	0 %	4000000.00	
1	ԱՁ Արտակ Իսրայելյան	5000000	0 %	5000000	5000000	0 %	5000000.00	

Աճուրդն ամփոփվել է 08.04.2022թ-ին և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ջուզեպպե» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը ուսումնասիրեց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը և արձանագրեց, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն 06.04.2022թ.-ից ներառված է վերը նշված ցուցակում:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ Համակարգի կողմից **1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ջուզեպպե» ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝**

- Մասնակցի կողմից ներկայացված 1-ին հավելվածը /դիմում հայտարարություն/ չի համապատասխանում ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի պահանջներին, մասնավորապես.
  - Ընթացակարգի ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրի փոխարեն գրվել է ԷԱՃԱՊՁԲ-2022/3-5-ԵՊԲՀ :
  - ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով ընթացակարգը բաղկացած է 1 չափաբաժնից, սակայն դիմում-հայտարարությունը ներկայացվել է 1-24 չափաբաժինների համար:
  - Ընկերության անվանումը ռուսերեն լեզվով նարկայացվելու փոխարեն ներկայացվել է հայերեն լեզվով:
  - Դիմում-հայտարարությունը ստորագրված չէ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով /ՀՀ ռեզիդենտ համարվելու դեպքում պետք է ստորագրվի էլեկտրոնային թվային ստորագրությամբ/:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը մասնակցի կողմից չի ներկայացվել:
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը անհասկանալի է և չի բավարարում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

Վերոհիշյալ բացթողումների ուսումնասիրության արդյունքներով հնարավոր չէր ճշտել մասնակցի կողմից հայտը ներկայացնելու /կամ համակարգ ներբեռնելու/ օրը, ուստի հանձնաժողովը որոշեց PPCM համակարգի հետադարձ կապի միջոցով հարցում ուղարկել մասնակցի կողմից հայտը eauction համակարգ ներբեռնելու օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, սույն բովանդակությամբ.

Հարցում- «Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար փաստաթղթերի պահման պահարանների ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել <<Ջուզեպպե>> ՍՊԸ-ն: Սակայն 06.04.2022թ.-ից տվյալ ընկերությունը ներառվել է գնումների գործընթացին մասնեկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Ընկերության կողմից չի կցվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, իսկ դիմում-հայտարարությունը չի ստորագրվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որով հնարավոր կլիներ պարզել հայտը ներկայացնելու օրը: Ուստի խնդրում ենք հետագա ընթացքը որոշելու նպատակով գնահատող հանձնաժողովին տրամադրել մասնակցի կողմից eauction համակարգում հայտը կցելու օրվա վերաբերյալ տեղեկատվություն departmentofcommittee@gmail.com էլեկտրոնային հասցեով:

Կանխավ շնորհակալություն:»

Հարցմանը ի պատասխան ներկայացվել է, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով մասնակցության հայտը ներբեռնել է համակարգ կամ ներկայացրել է 04.04.2022թ.-ին ժամը 10:03:44-ին իսկ մասնակիցը գնումների գործընթացին մասնեկցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկվել է 06.04.2022թ.-ից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՓՊ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 14.04.2022թ.-ին նիստը կասեցնել ՝ ծանուցել 1-ին չափաբաժնի առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ջուզեպպե» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները և չկցված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 18.04.2022թ. ժամը 16:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 18.04.2022թ. ժամը 16:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 18.04.2022թ. ժամը 16:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ «Ջուզեպպե» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

«Ջուզեպպե» ՍՊԸ -ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

20.04.2022թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ջուզեպպե» ՍՊԸ -ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գագիկ Արշակյան

անդամներ՝ _____ Մարիամ Նիկոյան

_____ Վահագն Մկրտչյան

_____ Մերի Անտոնյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան